ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

19.10.2019 *Ք. Իջևան*

Մասնակցում էին գիտխորհրդի 21 անդամներից 17-ը

Նիստին հրավիրված էր մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը

ՕՐԱԿԱՐԳ

1. 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփման մասին: /Զեկուցող՝ Վ. Աղաբաբյան/
2. 2019-2020 ուստարվա առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին /Զեկուցող՝ Կ. Պողոսյան/:
3. Ամբիոններում 2019-2020 ուստարվա առարկայական փաթեթների առկայության մասին (զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ): /Զեկուցող՝ ամբիոնի վարիչներ/
4. Ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների հաստատում: / Զեկուցող՝ Կ. Պողոսյան/
5. Ամբիոնների 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանների հաստատման մասին: / Զեկուցող՝ Կ. Պողոսյան/
6. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2019-2020 ուստարվա I կիսամյակի աշխատանքային պլանի քննարկման և հաստատման մասին: / Զեկուցող՝ Կ. Պողոսյան/
7. Ընդհանուր մանկավարժության մասնագիտության «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով մագիստրատուրա բացելու մասին: / Զեկուցող՝ Լ. Սարգսյան/

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցող Վ. Աղաբաբյանը ներկայացրեց 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփումը: Նա նշեց, որ

լուծարքային շրջանը կազմակերպվել է ժամանակացույցին համապատասխան, խախտումներ և բացթողումներ չեն արձանագրվել:

Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետում 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանին մասնակցել է 273 ուսանող: Անբավարար գնահատականներ են ստացել 47 ուսանողներ, որոնցից 1 անբավարար ստացել է 30 ուսանող, 2 անբավարար՝ 11, 3 և ավելի անբավարար՝ 6 ուսանող: Լուծարքային շրջանին մասնակցած ուսանողների գերակշիռ մասը դրական գնահատական են ապահովել 1-ին լուծարքային շրջանի ժամանակ: Զեկուցողը ըստ կուրսերի ներկայացրեց լուծարքային շրջանի ընդհանուր պատկերը.

«Պատմություն» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել են 6 ուսանողներ, որոնք 2-րդ լուծարքային շրջանում ստացել են դրական գնահատականներ:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել են 35 ուսանողներ, որոնք դրական միավոր են ստացել 1-ին լուծարքային շրջանում:

«Օտար լեզու և գրականություն» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել է 5 ուսանողներ, որոնցից 3-ը դրական գնահատականներ են ստացել 1-ին լուծարքային շրջանում, իսկ 2 ուսանող՝ 2-րդ լուծարքային շրջանում:

«Հոգեբանություն», «Հայոց լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերով սովորող բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատականներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ֆ.մ.գ.թ., դոցենտ Ա. Մակարյանը, բ.գ.թ., ասիստենտ Կ. Պողոսյանը, հ.գ.թ, դոցենտ Լ. Սարգսյանը, բ.գ.թ., ասիստենտ Մ. Սարուխանյանը, Զ. Ոսկանյանը, Վ. Հարությունյանը:

Ա. Մակարյանը նշեց, որ ուսուցանվող առարկաները պետք է նպաստեն հետագայում ուսանողներին մրցունակ դառնալու գործում, և հարցաշարերը պետք է բխեն ուսումնական ծրագրերից: Վ. Հարությունյանը նշեց, որ ծրագրերը բարդ են, ուսանողները դժվարանում են հաղթահարե, և այդ պատճառով կան անբավարար գնահատականներ: Լ. Սարգսյանը, անդրադառնալով «Մաթեմատիկա» առարկայից անբավարար գնահատական ստացողների մեծ թվաքանակին, առաջարկեց այդ առարկան ընդունելության համար դարձնել պարտադիր: Նա նաև նշեց, որ ուսումնական ծրագրերում կատարել են մեծ թվով փոփոխություններ, և

դասընթացներն այժմ ավելի են համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցող Կ. Պողոսյանը ներկայացրեց 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը: Նշեց, որ այն քննարկվել է ուսանողների հետ: Զեկուցողը փաստեց, որ առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը ժամանակին տրամադրվել են ուսանողներին: Այժմ ստուգվում է ֆակուլտետում առարկայական ծրագրերի կատարման ընթացքը: Ստուգվում է ծրագրերի կատարողականը և դրան համապատասխան՝ մատենավարության վիճակը: Բացի այդ՝ ընթացիկ քննությունները կանցկացվեն հատուկ կահավորված լսարաններում, որտեղ կիրականացվի տեսանկարահանում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ, դոցենտ Լ. Թումանյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնի վարիչները: Նրանք նշեցին, որ ամբիոններում առարկայական փաթեթները հիմնականում առկա են: Ընթացքի մեջ են այն փաթեթները, որոնց ուսումնական պլաններում փոփոխություններ են տեղի ունեցել: Բացի այդ՝ կան նաև կամընտրական առարկաներ, որոնք դասավանդվում են վերջին տարին և այդ առարկաների համար գրվել են առարկայական ծրագրեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ, դոցենտ Լ. Թումանյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ամբիոններում առարկայական փաթեթների վիճակը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը ներկայացրեց ֆակուլտետում ուսուցանվող հինգ կրթական ծրագրերի կողմից դեռևս նախորդ ուստարվա ավարտին տրված կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները: Գիտական ղեկավարների կողմից առաջադրված թեմաները նախապես քննարկվել են ամբիոններում, համապատասխանում են գիտականության չափորոշիչներին, արդիական են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը: Նրանք նշեցին, որ ամբիոններում քննարկվել են թեմաների վերնագրերը, հստակեցվել կուրսային և ավարտական աշխատանքներին ներկայացվող պահանջները:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել 2019-2020 ուստարվա կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը արձանագրեց, որ կիսամյակի կտրվածքով ամբիոնների աշխատանքային

գործունեության պլանավորման անհրաժեշտությունը դարձել է կարևոր խնդիր: Դա կդյուրացնի ամբիոնների աշխատանքների կանոնակարգումը և վերահսկողությունը: Ամբիոնների աշխատանքային պլանները քննարկվել են ամբիոնային նիստերում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կառուցվածքում գործող Հայոց պատմության և հասարակագիտության, Հայոց լեզվի և գրականության, Մանկավարժության և հոգեբանության, Անգլերեն լեզվի և գրականության, Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնների և Ռուսաց լեզվի և գրականության սեկցիայի 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 6-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետի 2019-2020 ուստարվա ուսումնական գործունեությունը կազմակերպված և նպատակային վարելու առումով աշխատանքային պլանում կատարվել են որոշակի փոփոխություններ: Այս փոփոխությունները թույլ են տալիս ֆակուլտետի գործունեությունը դարձնել առավել ճկուն և արդյունավետ: Զեկուցողը հայտնեց, որ աշխատանքային պլանը նախապես քննարկվել է դեկանատի նիստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 7-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը: Նա խոսեց այն մասին, որ Տավուշի մարզում բավականաչափ զգալի է մանկավարժի որակավորումով մասնագետների կարիքը: Վերջին տարիներին բուհն ավարտած և տարբեր մասնագիտություններով որակավորում ստացած անձինք դպրոցում ուսուցչի հաստիքով աշխատելու համար պետք է ունենան նաև մանկավարժի որակավորում: Իսկ դպրոցներում որակյալ մանկավարժ կադրերի պակասի մասին մարզում պարբերաբար բարձրաձայնվում է: Այս խնդիրը մտահոգիչ է, և ամբիոնի նիստերի ժամանակ պարբերաբար եղել են քննարկումներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ.:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ձևավորել «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագիրը մշակող խումբ՝ հետևյալ կազմով.

1. Սարգսյան Լևոն, աշխատանքային խմբի ղեկավար, ամբիոնի վարիչի պաշտոնակատար, հ.գ.թ., դոցենտ
2. Գյուլամիրյան Ջուլիետա, մ.գ.դ., պրոֆեսոր
3. Կարապետյան Նելլի, մ.գ.թ., դոցենտ
4. Ասատրյան Սամվել, մ.գ.թ., դոցենտ
5. Հարությունյան Վանուհի, ՏՄՄ IV կուրսի ուսանողուհի
6. Սարգսյան Մերի, շրջանավարտ, ՀԼԳ մագիստրոս
7. Պարոնյան Արինա, շրջանավարտ, ԱԼԳ մագիստրոս
8. Մկրտումյան Հասմիկ, թիվ 1 հիմն. դպրոցի ուսուցչուհի
9. Հովակիմյան Արմինե, թիվ 5 հիմն. դպրոցի ուսուցչուհի

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	Կ. Պողոսյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Վ. Աղաբաբյան